

Հաշմանդամություն ունեցող անձանց  
իրավունքների մասին կոնվենցիայի/ՀՈՒԱԻԿ  
այլընտրանքային զեկույց



ՀՔԱ Վանաձորի գրասենյակ



Բաց Հասարակության  
Հիմնադրամներ - Հայաստան

Կազմվել է

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից

2014

## Բովանդակություն

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի/ՀՈՒԱԻԿ	1
այլընտրանքային զեկույց.....	1
Ներածություն.....	3
Հոդված 5. Հավասարությունը և խտրականության բացառումը .....	4
Հոդված 12. Օրենքի առաջ հավասարությունը .....	5
Հոդված 13. Արդարադատության մատչելիությունը .....	7
Հոդված 14. Անձի ազատությունը և անվտանգությունը .....	8
Հոդված 15. Խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատումը .....	10
Հոդված 16. Շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը.....	11
Հոդված 19. Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը .....	12
Հոդված 22 . Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը.....	13
Հոդված 25. Առողջությունը .....	14
Հոդված 10. Կյանքի իրավունք .....	14
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին.....	16

## Ներածություն

2010 թվականի սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան /այսուհետ՝ Կոնվենցիա/, որով ստանձնեց պարտավորություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը: Մինևույն ժամանակ դեռևս չի վավերացրել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը<sup>1</sup>:

Կազմակերպությունը 2007 թվականից առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը:

Կազմակերպության կողմից իրականացվել են մարդու իրավունքների մշտադիտարկումներ ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում 2007, 2009 և 2013 թվականներին<sup>2</sup>, իրականացվել է զանգվածային լրատվության միջոցներով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տարածվող նյութերի մշտադիտարկում, պետական բյուջեից հոգեկան առողջության բնագավառի ֆինանսավորման վերաբերյալ ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել են օրենսդրական և պրակտիկայի բարեփոխման առաջարկություններ:

Սույն այլընտրանքային զեկույցում ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վիճակը: Մասնավորապես ներկայացվում են Կոնվենցիայի մի շարք հոդվածների դրույթների ներպետական օրենսդրության մեջ արտացոլման, Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրարկման, իրականացման հետ կապված խնդիրները, որոնք վեր են հանվել Կոնվենցիայի և ներպետական օրենսդրության համեմատական վերլուծության, ինչպես նաև պրակտիկայում օրենսդրության կիրարկման անմիջական ուսումնասիրության /մշտադիտարկումների/ միջոցով:

---

<sup>1</sup> ՀՀ հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությանը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշմամբ որպես միջոցառում է նախատեսվել. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

<sup>2</sup> 2007 թ. կազմակերպությունը մշտադիտարկում է իրականացրել Լոռու մարզպետարանի ենթակայությամբ գործող Լոռու մարզային հոգեկայարդաբանական դիսպանսերում, 2009 թ. Առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող Սևանի հոգեբուժական հիվանդանոցում, Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայում, Ավանի հոգեբուժական կլինիկայում, Նորքի հոգեբուժական կլինիկայում, Քասախի ներոզների կլինիկայում, Սյունիքի մարզպետարանի ենթակայությամբ գործող Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսերում, Արարատի մարզպետարանի ենթակայությամբ գործող Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոնում, Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում 2014 թ. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում:

## Հոդված 5. Հավասարությունը և խտրականության բացառումը

1. ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք այլ իրավական ակտերով ամրագրված է օրենքի առջև բոլորի հավասարությունը և խտրականության բացառումը: Խտրականության բացառման և հավասարության որոշ դրույթներ ամրագրված են ներպետական իրավական ակտերում, սակայն հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է խտրականությունից /բոլոր տեսակների/ զերծ մնալու անձի իրավունքը սահմանող, պաշտպանող միասնական և ամբողջական օրենսդրություն և մեխանիզմներ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ որպես խոցելի խմբի հանդեպ խտրականությունը առավել մտահոգիչ է:
2. Հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը խտրական մոտեցման պատճառով և հատկապես պետական աջակցության շրջանակներում խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում գտնվում է անբավարար վիճակում: Խտրականության պատճառներ են հանդիսանում՝
  - հասարակության կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի առկայությունը,
  - հոգեբուժական բուժհաստատությունների աշխատակիցների անբավարար մասնագիտական պատրաստվածությունը, մասնավորապես մարդու իրավունքների վերաբերյալ անբավարար իրազեկվածությունը,
  - հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման և խնամքի իրականացումը փակ տիպի հոգեբուժական բուժհաստատություններում:
3. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ հասարակության կողմից խարանը և կարծրատիպերը նպաստում են նրանց և՛ ընտանիքից, և՛ հասարակությունից մեկուսացմանը՝ սոցիալական կապերի խզմանը:
4. Հասարակության կողմից նման վերաբերմունքին նպաստում են զանգվածային լրատվության միջոցներով տարածվող նյութերը: Մասնավորապես մեծ թիվ են կազմում նյութերը (2011-2013 թթ. հավաքագրված 431 նյութերից 86-ը (մոտ 20 տոկոսը), որոնք, լուսաբանելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարվող հանցագործությունները, նպաստում են այն կարծիքի ձևավորմանը, որ այդ անձինք վտանգավոր են հասարակության համար և նրանց անհրաժեշտ է մեկուսացնել հասարակությունից: Նման վերաբերմունքը հանգեցնում է նույնիսկ ընտանիքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցմանը<sup>3</sup>:
5. Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքն ու բուժումը հիմնականում իրականացվում է հոգեբուժական մեծ, փակ տիպի բուժհաստատությունների կողմից, իսկ նմանատիպ բուժհաստատություններում գտնվելը ինքնին հանգեցնում է խտրական վերաբերմունքի ձևավորմանը: Կարող ենք փաստել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք հոգեբուժական բուժհաստատություններում մասնավորապես անձնակազմի կողմից չեն ընդունվում որպես անհատ, ով ունի մարդկային արժանապատվություն և իրավունքներ:

<sup>3</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույցի հավելված Ե - Հոգեկան առողջության ոլորտում մարդու իրավունքների վիճակը՝ ըստ պաշտոնական կայքէջերով և զանգվածային լրատվության միջոցներով տարածված նյութերի [http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main\\_zekuyc\\_FINAL.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main_zekuyc_FINAL.pdf)

6. Չնայած օրենսդրությամբ սահմանված է հոգեբուժական բուժհաստատություններում գտնվելու ընթացքում անձի իրավունքները՝ օգտվելու իրավաբանական օգնությունից, հեռախոսակապից, անմիջականորեն դիմելու բուժհաստատության ղեկավարին կամ բաժանմունքի վարիչին՝ բուժման, հետազոտման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության հարցերով և այլն, այնուամենայնիվ հոգեբուժական բուժհաստատություններում գտնվող անձինք չեն կարողանում իրացնել իրենց իրավունքները, քանի որ ենթարկվում են խտրական վերաբերմունքի:

## 7. Առաջարկություններ

- «Խտրականության դեմ» ՀՀ օրենքի ընդունում
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում նրանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման նպատակով
- Մարդու իրավունքների դասընթացների կազմակերպում և իրականացում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, բուժաշխատակիցների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամք իրականացնողների, հարազատների, լրագրողների, գործատուների համար

## Հոդված 12. Օրենքի առաջ հավասարությունը

8. Չնայած կոնվենցիայի հոդված 12-ում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության հոդված 14-ում ամրագրված է հաշմանդամություն ունեցող անձանց օրենքի առաջ հավասարությունը, իսկ կոնվենցիայի հոդված 12-ի 2-րդ կետով ամրագրված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում, այնուամենայնիվ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք կարող են ճանաչվել անգործունակ, ինչի հետևանքով նրանք զրկվում են իրենց իրավունքների պատշաճ և լիարժեք իրականացման, որոշում կայացնելու և ինքնուրույն գործելու հնարավորությունից ինչպես կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերում, այնպես էլ ամենօրյա կենցաղային հարցերում, ինչպես նաև զրկվում են իրենց գործողությունների համար պատասխանատվություն կրելուց: Անձը նաև իրավունք չունի դիմել դատարան իր գործունակությունը վերականգնելու պահանջով: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը վճիռ է կայացնում ապաքինվածին գործունակ ճանաչելու մասին միայն խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության ղեկավարի՝ դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա:

9. Ըստ ՀՀ օրենսդրության՝ ճանաչվելով անգործունակ՝ քաղաքացին զրկվում է՝

- անձամբ իր անունից տարբեր տեսակի քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու հնարավորությունից,
- աշխատանքի ընդունվելու, աշխատելու հնարավորությունից,

- ընտրելու և ընտրվելու հնարավորությունից,
- անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի երաշխիքներով պաշտպանված լինելու հնարավորությունից,
- տեղեկատվություն ստանալու հնարավորությունից,
- լիարժեք անձնական և ընտանեկան կյանք վարելու հնարավորությունից,
- իր իրավունքները անձամբ իրացնելու և պաշտպանելու հնարավորությունից, արդարադատության մատչելիության հնարավորությունից:

10. Անձի իրավունքների նկատմամբ նշված բոլոր սահմանափակումները չունեն որևէ հիմնավորում:
11. Միննույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ 2014 թ. հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով որպես միջոցառում է սահմանվել՝ հստակեցնել հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքերը և մշակել անգործունակության գնահատման տարբերակված չափանիշներ:
12. 2010 թ. հունվարի 1-ից մինչ 2012 թ. հունիս ամիսը ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում անձին անգործունակ ճանաչելու նպատակով ստացվել է 739 դիմում, որից բավարարվել է 447-ը, այսինքն՝ դիմումների գրեթե 60 տոկոսը<sup>4</sup>: Նույն ժամանակահատվածում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում անձին գործունակ ճանաչելու նպատակով դիմումներ չեն ստացվել<sup>5</sup>: Միայն 2011 թվականի ընթացքում անգործունակ է ճանաչվել 213 քաղաքացի:
13. Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը Հայաստանի Հանրապետությունում պետական աջակցության շրջանակներում 18 տարին լրացած հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություն մատուցող միակ հաստատությունն է, որը գործում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ և այստեղ կարող են ընդունվել միայն անգործունակ ճանաչված անձինք: Այս հաստատությունից դուրս գալու որոշում վերջիններս չեն կարող կայացնել /հաստատությունը շուրջօրյա խնամք է տրամադրում շուրջ 450 անձի/: ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության ներքո գործող նյարդահոգեբուժական բուժհաստատություններում ևս բուժում կամ խնամք են ստանում անգործունակ ճանաչված անձինք, ովքեր օրինական ներկայացուցչի համաձայնությամբ են ընդունվում և միայն վերջինիս համաձայնությամբ կարող են դուրս գրվել հաստատությունից:
14. Կարելի է պնդել, որ որոշ դեպքերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ընտանիքի անդամները ձգտում են իրենց հարազատին ճանաչել անգործունակ, որպեսզի տնօրինեն նրան հասանելի սոցիալական աջակցության նպաստները, ավելին՝ ձգտում են տեղավորել պետական աջակցության շրջանակներում խնամք կամ բուժում տրամադրող հաստատություններում տվյալ անձի ունեցվածքը ամբողջությամբ տնօրինելու նպատակով:

<sup>4</sup> Տե՛ս կազմակերպության «Չափահաս անձին անգործունակ ճանաչելու և խնամակալ նշանակելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները ՀՀ օրենսդրության համաձայն» ուսումնասիրությունը <http://hcav.am/wp-content/uploads/2014/05/Legal-capacity-1.pdf>

<sup>5</sup> Տե՛ս «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքնության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում» <http://www.hra.am/i/up/pmdARMFINALweb.pdf>

## 15. Առաջարկություններ

- Անձին լիովին անգործունակ ճանաչելու, ներառյալ խնամակալի կողմից անձի փոխարեն որոշումների կայացման համակարգի վերացում
- Այնպիսի համակարգի մշակում և ներդնում, որը հնարավորություն կտա հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ապահովել իրենց պահանջներին և ունակություններին համապատասխան բոլոր հնարավոր հարցերում որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ մատչելի աջակցությամբ՝ ստեղծելով երաշխիքներ այլ անձանց և պատասխանատու պետական մարմինների կողմից չարաշահումներից և անձի իրավունքների խախտումներից գերծ մնալու համար
- Մինչ նոր համակարգի ներդրումը այնպիսի բարեփոխումների կատարում, որոնք հնարավորություն կտան անձին, որի գործունակությունը սահմանափակվել է, կամ իր կողմից ընտրված ներկայացուցչին դիմել իրավասու մարմին գործունակությունը վերականգնելու պահանջով

## Հոդված 13. Արդարադատության մատչելիությունը

16. Հայաստանի Հանրապետությունում ապահովված չէ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց արդար դատաքնության իրավունքը, չնայած Կոնվենցիայի հոդված 13-ով երաշխավորվում է հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով արդարադատության մատչելիությունը: Խնդիրը կապված է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ընթացակարգային մի շարք հնարավորությունների բացակայության և օրենքի կիրարկման հետ:
17. «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանվում է պետական տուրք: Նույն օրենքը նաև սահմանում է արտոնություններ, որի համաձայն հոգեբուժական հաստատությունները ազատվում են պետական տուրքի վճարման պարտականությունից՝ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով հանդես գալու ժամանակ: Նշված արտոնությունից օգտվում են նաև դիմողները՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով հանդես գալու ժամանակ: Մինչդեռ նույն արտոնությունից չի օգտվում այն անձը, ում նկատմամբ հարկադիր բուժում նշանակելու կամ անգործունակ ճանաչելու մասին դիմում է ներկայացվել, նշված դիմումները բողոքարկելիս:
18. Բացի այն, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք բավարար աջակցություն չեն ստանում իրենց իրավունքների պաշտպանությունը իրացնելու համար, մասնավորապես պատշաճ չեն իրազեկվում իրենց վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման հնարավորությունների և մեխանիզմների վերաբերյալ, նաև չի ցուցաբերվում համապատասխան մասնագիտացված իրավաբանական աջակցություն: Արդյունքում շատ քիչ դեպքերում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք զբաղվում իրենց իրավունքների պաշտպանությամբ (անձամբ կամ ներկայացուցչի

միջոցով), էլ առավել քիչ դեպքերում՝ հասնում հաջողության: Այսպես՝ 2011-2012 թ. հոգեբուժական հաստատությունում քաղաքացուն հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ կայացված 82 բավարարված գործերից որևէ մեկը չի բողոքարկվել<sup>6</sup>: Ավելին, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հանդեպ խտրական վերաբերմունքը նրանց էլ ավելի անբարենպաստ վիճակի մեջ է դնում: Այսպես, կազմակերպության փորձը ցույց է տալիս, որ երբ անձը դատարանին ներկայացվող բողոքը կազմում է օրենսդրության սահմանված ձևի թերացումներով, վերջինիս բողոքը վարույթ չի ընդունվում, սակայն նրա նկատմամբ հարկադիր բուժում նշանակելու մասին հոգեբուժական հաստատության դիմումը, որը կազմված է թերացումներով, վարույթ է ընդունվում:

19. Միևնույն ժամանակ, չնայած ՀՀ օրենսդրությունը նախատեսում է որոշակի երաշխիքներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար, այնուամենայնիվ նրանք հաճախ չեն գործում արդյունավետ կերպով: Այսպես, ըստ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 176-ի՝ հարկադիր բուժման վերաբերյալ դիմումի քննությանը պարտադիր է այն անձի ներկայացուցչի մասնակցությունը, որի նկատմամբ լուծվում է բուժման հարցը: Կազմակերպության փորձը ցույց է տալիս, որ ներկայացուցչի ներկա գտնվելը կարող է ձևական բնույթ ունենալ, ավելին հակասել տվյալ անձի շահերին<sup>7</sup>:

## 20. Առաջարկություններ

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ տուրքից ազատման արտոնություն տալով նաև հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման և անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերով անցնող քաղաքացիներին
- Կազմակերպել ընդհանուր իրավասության, վերաքննիչ դատարաններում և վճռաբեկ դատարանի պալատներում դատավորների ոլորտային խորը մասնագիտական վերապատրաստումներ՝ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ
- Կազմակերպել դատավորների, փաստաբանների, իրավապահ մարմինների ծառայողների վերապատրաստում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացում

## Հոդված 14. Անձի ազատությունը և անվտանգությունը

21. Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժումը և խնամքը դեռևս իրականացվում է հոգեբուժական հաստատություններում և բացակայում են բավարար չափով այլընտրանքային

<sup>6</sup> Տե՛ս՝ Ղատակյան պրակտիկայի նյութեր [http://court.am/?l=lo&id=50&cat\\_id=0&page\\_num=5](http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=5)

<sup>7</sup> Տե՛ս՝ Ժուլետտա Ամարիկյանի գործի վերաբերյալ նյութերը

<http://hcav.am/?s=%D4%BA%D5%B8%D6%82%D5%AC%D5%A5%D5%BF%D5%A1+%D4%B1%D5%B4%D5%A1%D6%80%D5%AB%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6&lang=hy>



համայնքահեն ծառայություններ, արդիական է մնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի անհարկի և կամայական ազատագրկման խնդիրը:

22. Բացի այդ հոգեբուժական հաստատությունում կամայականորեն ազատությունից զրկվելուն նպաստում են.
- օրենքով սահմանված իրավական աջակցության չապահովումը<sup>8</sup>,
  - հոգեբուժական հաստատությունում բուժման համար անձի պարտադրված համաձայնությունը,
  - հոգեբուժական հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրենց իրավունքների մասին պատշաճ իրազեկման բացակայությունը:
23. Կազմակերպության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը ցույց է տալիս, որ չնայած ներպետական օրենսդրությամբ սահմանված է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձին իրավական աջակցությամբ ապահովումը, անձինք իրենց նկատմամբ հարկադիր բուժման և այդ կերպ ազատությունից զրկվելու մասին որոշում կայացնելու գործընթացում իրավական աջակցությամբ չեն ապահովվում: Շատ դեպքերում նրանք պատշաճ չեն իրազեկվում իրենց իրավունքների մասին, մասնավորապես՝ իրավական աջակցություն ստանալու իրավունքի մասին: Ավելին, հոգեբուժական բուժհաստատության կողմից կարող են ստեղծվել խոչընդոտներ իրավական աջակցություն ստանալու, մասնավորապես սեփական միջոցներով իրավաբանի ծառայություններից օգտվելու հարցում: Որոշ հաստատությունների տնօրեններ նույնիսկ տեղեկացված չեն նման աջակցությամբ անձին ապահովելու պարտավորության մասին և պնդում են, որ օրենքը հոգեբուժական հաստատությունում գտնվող անձին նման հնարավորություն չի տալիս:
24. Անձը հաճախ այսպես ասած հարկադիր բուժման է ենթարկվում և զրկվում ազատությունից առանց դատարանի որոշման: Վերջինիս պատճառ է հանդիսանում բուժհաստատության աշխատակիցների, հարազատների ճնշումների, սպառնալիքների ազդեցության տակ բուժման վերաբերյալ անձի համաձայնություն տալը<sup>9</sup>:
25. Անձի կամայական ազատագրկմանն է նպաստում նաև անձի անգործունակության ինստիտուտը:

## 26. Առաջարկություններ

- Օրենսդրորեն ամրագրել փաստաբանի ներգրավումը հոգեբուժական բուժհաստատություն անձի ընդունման գործընթացի սկզբից
- Հոգեբուժական բուժհաստատությունում հարկադիր բուժում ստացող անձի բուժման և դուրսգրման գործընթացների նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացում
- Հոգեկան առողջության ոլորտին վերաբերող միջազգային և ներպետական իրավական ակտերի և ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ դասընթացների իրականացում

<sup>8</sup> 2014 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, ըստ որի հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա իրավական օժանդակությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի նշանակված փաստաբանի կողմից:

<sup>9</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույցը [http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main\\_zekuyc\\_FINAL.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main_zekuyc_FINAL.pdf)

հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, նրանց ծառայություններ մատուցողների համար

## Հոդված 15. Խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատումը

27. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում առկա է վատ, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ անմարդկային, վատ վերաբերմունք դրսևորվում է հատկապես ֆիզիկական զսպման միջոցների կիրառման ժամանակ, որը պայմանավորված է օրենքի անկատարությամբ և կիրարկմամբ:
28. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը միջամտություն է նրանց բնական, սահմանադրական և մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված իրավունքներին և այդ միջամտությունը չի կարող իրավաչափ լինել, եթե չի իրականացվում «օրենքով սահմանված» կարգով: Մինչդեռ օրենքում տրված կարգավորումը ընդհանուր բնույթի է և դրա իրականացումը հնարավոր է մասնավորեցնող իրավակարգավորումների համաձայն: Թեև ՀՀ առողջապահության նախարարի՝ 03.05.2010 թ № 691-Ա հրամանով որոշակի իրավակարգավորման է ենթարկվել խնդրո առարկա իրավահարաբերությունները, սակայն նման լիազորություն ՀՀ առողջապահության նախարարին օրենքով վերապահված չէ և չէր կարող վերապահվել, քանզի բացառապես օրենքներով կարող են սահմանվել, ի թիվս այլոց ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները և դրանց ընթացակարգերն ու իրականացման եղանակները:
29. Այնուամենայնիվ, նույնիսկ նախարարի հրամանում ամրագրված դրույթները կիրարկվում են կոպիտ խախտումներով՝ ֆիզիկական զսպման միջոցները կիրառվում են ոչ միայն բժշկի որոշմամբ տվյալ անձի բուժման նպատակով, այլ նաև որպես պատիժ և այլ անձանց վախեցնելու միջոց: Ֆիզիկական զսպման միջոցի կիրառման ձևը, ժամանակահատվածը և հսկողությունը ևս մտահոգություն է առաջացնում: Մասնավորապես օգտագործվում են ամրակապեր, որոնք մարդու առողջությանը վնաս են պատճառում, չափահաս անձի նկատմամբ ֆիզիկական զսպման միջոցի կիրառման ժամանակահատվածը առանց ընդմիջումների ձգվում է ընդհուպ մինչև ամբողջ գիշեր, ամբողջ օր, իսկ հսկողությունն ու խնամքը տարվում է հիմնականում այլ բնակիչների կողմից: Իսկ ֆիզիկական զսպման միջոցների կիրառման վայրը, կիրառողները առհասարակ սահմանված չեն, ուստի դրանք կիրառվում են այլ բնակիչների ներկայությամբ և այլ բնակիչների օգնությամբ<sup>10</sup>:
30. Ի լրումն վերոնշյալի, Հայաստանի Հանրապետությունում չի գործում խոշտանգումների դեմ պայքարի համապարփակ քաղաքականություն: ՀՀ քրեական օրենսգրքով

<sup>10</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» գեկույցը [http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main\\_zekuyc\\_FINAL.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main_zekuyc_FINAL.pdf)

նախատեսված «Խոշտանգում» հանցակազմը չի համապատասխանում Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի սահմանմանը, ուստի առկա չեն նաև խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում խոշտանգումներից զերծ մնալու անձի իրավունքի արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ:

### 31. Առաջարկություններ

- Օրենքով ամրագրել միայն բժշկական նպատակներով և հիմնավորմամբ ֆիզիկական զսպման միջոցների կիրառման ընթացակարգերը
- ՀՀ քրեական օրենսգրքում «Խոշտանգում» հանցակազմի ամրագրում Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների համապատասխան, խտրականության պատճառի ամրագրում որպես ծանրացուցիչ հանգամանք

## Հոդված 16. Շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը

32. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պետական աջակցության շրջանակներում խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում ենթարկվում են աշխատանքային շահագործման, հոգեբանական և ֆիզիկական բռնությունների<sup>11</sup>: Խնդրի հիմնական պատճառներ են հանդիսանում հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների մասնագիտական ոչ պատշաճ պատրաստվածությունը և աշխատակիցների անբավարար թիվը:
33. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրսևորվում են հոգեբանական և ֆիզիկական բռնություններ ծեծի, սպառնալիքների, ճնշումների, բարկանալու և այլ տեսքով: Ընդ որում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք հոգեբանական և ֆիզիկական բռնությունների են ենթարկվում ոչ միայն աշխատակիցների, այլ նաև այլ բնակիչների (residents) կողմից:
34. Ֆիզիկական և հոգեբանական բռնությունները շատ հաճախ պատճառ են հանդիսանում, որպեսզի բնակիչները հաստատությունների կարիքների համար տարբեր աշխատանքներում ներգրավվեն: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք իրականացնում են բաժանմունքի և բակի մաքրության, սննդի տեղափոխման և այլ աշխատանքներ և դրա դիմաց փոխհատուցվում են «լավ» վերաբերմունքով, սուրճով, ծխախոտով:
35. Խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատությունների գործունեության հանդեպ հասարակական վերահսկողություն է իրականացվում թե՛ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի

<sup>11</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույցը [http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main\\_zekuyc\\_FINAL.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main_zekuyc_FINAL.pdf) և «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը որպես կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ» 2011 թ. զեկույցը file:///C:/Users/computer6/Desktop/pdf\_3101540\_arm\_xoshtang.pdf

դեմ» կոնվենցիայի Կամբոտի արձանագրության համաձայն ազգային կանխարգելման մեխանիզմի, թե՛ հասարակական կազմակերպությունների կողմից: Սակայն հոգեբուժական հաստատություններում հասարակական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մշտադիտարկման խմբի բացակայության պատճառով լիարժեք չի իրականացվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հանդեպ խոշտանգումների և շահագործումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանությունը:

### 36. Առաջարկություններ

- Պետական աջակցության շրջանակներում խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում հասարակական կազմակերպությունների կողմից մշտադիտարկման ինստիտուտի ձևավորում և ներդրում
- Հոգեբուժական ծառայություններ մատուցող անձանց համար կրթական ծրագրերի մշակում և պարբերական վերապատրաստումների իրականացման ծրագրերի մշակում և ներդրում կրթական հաստատություններում
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից խնամքի կամ բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում, ինչպես նաև հաստատություններից դուրս սոցիալ-հոգեբանական ծառայության համակարգերի մշակում և ներդրում

## Հոդված 19. Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը

37. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված են գրեթե 46.000 հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, մինչդեռ վերջիններս կոնվենցիայով ամրագրված անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրենց իրավունքի իրացման հնարավորություն չունեն: Համայնքահեն ծառայությունների տրամադրման ներպետական օրենսդրական կարգավորումները բացակայում են: Որպես կանոն բացակայում են նաև համայնքում ներգրավմանն ուղղված համայնքահեն ծառայությունները: Գործում են համայնքահեն ծառայություններ, որոնք հասարակական կազմակերպությունների կողմից են տրամադրվում, սակայն վերջիններս հատային են և կենտրոնացած են մայրաքաղաքում:
38. Միայն հազարից ավելի քաղաքացի երկարաժամկետ է գտնվում խնամքի և բուժման ծառայություններ մատուցող փակ տիպի հաստատություններում: Այս քաղաքացիները ոչ թե ներառվում, ինտեգրվում են համայնքում, այլ մեկուսանում են համայնքից, զրկվում իրենց իրավունքների իրացման, ինքնուրույն կյանք վարելու, որոշումներ կայացնելու հնարավորություններից: Վերջիններս չեն կարող ինքնուրույն դուրս գալ հաստատությունից, զանգել իրենց հարազատներին:
39. Բացի այդ ինչպես խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում գտնվող, այնպես էլ տնային պայմաններում բուժում ստացող անձանց նկատմամբ առկա է խարան, կարծրատիպեր ու խտրական վերաբերմունք: Համայնքում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ևս մեկուսացված են համայնքից և չեն ստանում համայնքում ներգրավվելու, համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ աջակցություն:

#### 40. Առաջարկություններ

- Համայնքահեն ծառայությունների ներդրման նպատակով կարիքների մանրամասն ուսումնասիրություն, գնահատում և դրան համապատասխան ծառայությունների ներդրում
- Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքային ծառայությունների տրամադրման մեխանիզմների օրենսդրական կարգավորումների մշակում, ընդունում և կիրարկում

### Հոդված 22 . Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը

41. Ապահովված չէ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքը հոգեբուժական բուժհաստատություններում:
42. Հոգեբուժական բուժհաստատություններում առկա չէ յուրաքանչյուր բնակչի համար անձնական իրերի ապահով պահման հնարավորություն: Ավելին բնակիչների մահճակալները, կողապահարանները, սենյակները, ինչպես նաև գրպանները պարբերաբար ստուգվում են աշխատակիցների կողմից, ընդ որում մահճակալները և կողապահարանները երբեմն ստուգվում են առանց տվյալ բնակչի ներկայության:
43. Հոգեբուժական բուժհաստատություններում ապահովված չէ նաև անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից գրված նամակները գրաքննության են ենթարկվում աշխատակցի կողմից և աշխատակիցն է որոշում ուղարկել, թե ոչ նամակը, իսկ հեռախոսային խոսակցություններին աշխատակիցները ունկնդիր են լինում<sup>12</sup>:

#### 44. Առաջարկություններ

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական կյանքի, անձնական իրերի ապահով պահման հնարավորությունների ապահովում
- Հոգեբուժական հաստատություններում բնակչի հաղորդակցման միջոցների ապահովում և անձնական նամակագրության գաղտնիության սկզբունքների պահպանում

---

<sup>12</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույցը [http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main\\_zekuyc\\_FINAL.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main_zekuyc_FINAL.pdf)

## Հոդված 25. Առողջությունը

### Հոդված 10. Կյանքի իրավունք

45. Հայաստանի Հանրապետությունում չի ապահովվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անհատական, հատուկ կարիքներին համապատասխան հոգեբուժական օգնության տրամադրումը: Հոգեբուժական ծառայությունները ոչ միայն մատչելի չեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար, այլև Հայաստանի Հանրապետությունում ապահովված չէ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց առողջության իրավունքի պատշաճ իրականացումը:
46. Հոգեբուժական օգնության տրամադրման բեռը հիմնականում ընկած է հոգեբուժական 10 հաստատությունների վրա, որից 4-ը տեղակայված են Երևանում և կրում են փակ և կենտրոնացված բնույթ: Հոգեբուժական ծառայություն մատուցվում է ևս մի քանի ոչ հոգեբուժական կազմակերպությունների կողմից, որոնք նույնպես տեղակայված են Երևանում, և 21 պոլիկլինիկաների հոգեբուժական կաբինետների կողմից: Որպես այդպիսին բացակայում են սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծառայությունները: Հոգեբուժական ծառայությունները Հայաստանի Հանրապետության ոչ մայրաքաղաքային համայնքների մեծ մասում հասանելի չեն, մինչդեռ կոնվենցիան նախատեսում է առողջապահական ծառայությունների մատուցում անձի բնակության վայրին հնարավորինս մոտ, ներառյալ՝ գյուղական վայրերում:
47. Հոգեբուժական հաստատությունները մշտապես ապահովված չեն անհրաժեշտ քանակի և որակի դեղամիջոցներով, որի պատճառով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք կանոնավոր կերպով և օրենքով սահմանված անվճար հիմունքներով դեղերով չեն ապահովվում: Ընդ որում հոգեկան առողջության ոլորտում օգտագործվում են հիմնականում հայկական արտադրության դեղեր, որոնց որակի վերաբերյալ մտահոգություններ են հայտնում ոլորտին քաջատեղյակ բժիշկները: Եվ սա այն դեպքում, երբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման հիմնական մեթոդը դեղորայքային բուժման մեթոդն է:
48. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պատշաճ չեն իրազեկվում իրենց առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:
49. Հոգեբուժական բուժհաստատություններում պատշաճ ուշադրություն չի դարձվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոմատիկ հիվանդությունների բուժմանը, կանխարգելմանը, որի հետևանքով մեծ թիվ են կազմում մահացությունները /2010-2012 թթ. ընթացքում հոգեբուժական հաստատություններում մահացությունների ընդհանուր թիվը կազմել է 117, այդ թվում՝ սոմատիկ հիվանդությունների պատճառով՝ 115/: Ընդ որում, նշված մահացության դեպքերի վերաբերյալ չի տարվում պատշաճ քննություն: Մասնավորապես միայն 32-ի վերաբերյալ է հարուցվել քրեական գործ, որոնցից բոլորը կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով:
50. Հոգեբուժական բուժհաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց առողջության իրավունքի իրացման վրա բացասական ազդեցություն ունի կրտսեր և միջին բուժանձնակազմի պատրաստվածության վիճակը: Կրտսեր և միջին բուժանձնակազմը չի տիրապետում համապատասխան կարողությունների կոնկրետ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատելու համար: Ավելին, վերջիններս որպես այդպիսին վերապատրաստման դասընթացների չեն մասնակցում:

## 51. Առաջարկություններ

- Բուժման նորագույն մեթոդների ներդրում և իրականացում
- Կրթական, իրազեկման, կառուցվածքային միջոցառումների իրականացում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատող անձանց կողմից նրանց իրավունքների խախտումների դեպքերի կանխարգելման և ինստիտուցիոնալ պայմաններում նրանց բուժումից ու խնամքից խուսափելու նպատակով
- Մասնագիտացված կրթական ծրագրերի ներդրմամբ մասնագետների ուսուցման ապահովում
- Սումատիկ հիվանդությունների բուժման ապահովում հոգեկան առողջության խնդիրների բուժման ընթացքում

## Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատներին:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպությունն ունի ներկայացուցչություններ Սպիտակ և Երևան քաղաքներում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,  
Վանաձոր, Տիգրան Մեծի 59, 2001  
հեռ.՝ [\(+374 322\) 4 22 68](tel:+37432242268), ֆաքս՝ [\(+374 322\) 4 12 36](tel:+37432241236),  
կայքէջ՝ [www.hcav.am](http://www.hcav.am), էլ. փոստ՝ [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)